ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հոկտեմբերի 25-ից 27-ը Ուզբեկստանի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Արմեն Հայրապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Տաշքենդ քաղաք, հոկտեմբերի 25-ից 27-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Ասիական զարգացման բանկ

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «Ռազմավարություն 2030»-ի կորպորատիվ արդյունքների շրջանակը քննարկելու համար պետական պաշտոնյաների մասնակցությամբ խորհրդակցությանը:

6. **Քննարկված թեմաները՝**

Հանդիպման հիմնական նպատակն էր քննարկել ԱԶԲ-ի նոր երկարաժամկետ ռազմավարության՝ «Ռազմավարություն 2030», առաջնահերթությունները: Մինչև 2030թ. ընկած ժամանակահատվածի համար նախատեսված ռազմավարության հիմնական նպատակն է բանկի կողմից իրականացվող հիմնական տեսլականն ու գործառույթները համահունչ դարձնել Կայուն զարգացման նպատակներին, Զարգացման ֆինանսավորման օրակարգին, Կլիմայի փոփոխության Փարիզի հռչակագրին և Աղետների ռիսկերի կրճատման Սենդայի շրջանակին: Առաջնահերթությունների քննարկումները հիմնականում ուղղված էին տնտեսական զարգացման օրակարգին, որոնց շրջանակներում առանձնահատուկ կարևորություն տրվեց տարածաշրջանային զարգացման, աղքատության կրճատման և ենթակառուցվածքների զարգացման հարցերին:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Խորհրդակցությունը, հատկապես կարևորվում էր ռազմավարության հիմնական տեսլականի համապարփակ ներկայացման տեսանկյունից: Խորհրդաժողովի ընթացքում

ներկայացվեց ռազմավարության 7 գործառնական առաջնահերթությունները, որոնք են՝ 1) *անհավասարությունների կրճատում և աղքատության հաղթահարում, 2) գենդերային հավասարության հարցերում առաջընթացի ապահովում, 3) կլիմայի փոփոխությունների և բնապահպանական կայունության կառավարում, 4) կենսունակ քաղաքների զարգացում, 5) ագրարային բարեփոխումներ և սննդի ապահովում, 6) ինստիտուցիոնալ կարողությունների և կառավարման հզորացում, 7) տարածաշրջանային համագործակցության և ինտեգրացիայի ընդլայնում:*

Իմ կողմից նշվեց, որ նախկին քննարկումների շրջանակներում մեծապես կարևորվել է թվային զարգացման օրակարգը, մասնավորապես նաև ս.թ. մայիսին կայացած ԱԶԲ տարեկան ժողովի շրջանակներում, ուստի ներկայիս տեխնոլոգիական զարգացման պայմաններում, վերջինիս կարևորությունն ու արդիականությունն ավելի է ընդգծվում:

2030թ. Ռազմավարության համատեքստում տնտեսական առաջնահերթությունների իրականացման նպատակով ԱԶԲ-ն նախատեսում է նաև էականորեն ընդլայնել և զանազանեցնել իր մասնավոր հատվածի գործառությունները՝ նպատակով ունենալով այն հասցնել ընդհանուր գործառությունների 1/3-ին մինչև 2024թ.: Սա հնարավորություն կտա բարելավելու բնապահպանական, սոցիալական և կառավարչական ստանդարտները, բարելավելու ծրագրերի նախագծումը և ակնկալվող արդյունքները, ինչպես նաև առավել թիրախավորված կանխատեսելու ռիսկերը:

Խորհրդակցությունների ընթացքում առանձնահատուկ կարևորություն տրվեց նաև գիտելիքահենք ապրանքների և ծառայությունների ստեղծմանը՝ նորարական տեխնոլոգիաների ներգրավմամբ, որը կընդլայնի գիտական ներուժի ներգրավումը, ինչն էլ կնպաստի անդամ երկրների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը:

Խորհրդակցության ընթացքում անդրադարձ կատարվեց նաև ներբանկային գործառությունների կատարելագործմանը միտված մի շարք հարցերի, որոնք էապես կդյուրինացնեն երկրների և ԱԶԲ միջև ամենօրյա աշխատանքները համագործակցությունը, մասնավորապես գնման գործընթացներին, նոր նախագծերի մշակմանը, տեխնիկական աջակցության ներգրավմանը, կարողությունների զարգացման ծրագրերից օգտվելուն և այլն:

Վերոնշյալ բոլոր առաջնահերթությունների և թեմաների վերաբերյալ տեղի ունեցան քննարկումներ և մտքերի փոխանակումներ խորհրդաժողովի մասնակիցների միջև:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Խորհրդակցության ընթացքում ձեռք բերվեցին պայմանավորվածություններ, որ անդամ երկրները իրենց ապագա երկկողմ ծրագրերը նախագծելիս և իրականացնելիս հաշվի առնեն վերոնշյալ ռազմավարությանը և դրանով նախանշված առաջնահերթություններն ու թիրախները:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև, ռազմավարության առաջնահերթությունների շրջանակներում կարևորել նաև թվային օրակարգի զարգացումը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չկան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

30.10.2018թ.